« ԲԵՍԹ ՖԻՐՄ » ՍՊԸ-ին
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ. ք. Վանաձոր, Թումանյան 10

« **ՀՀ Շիրակի մարզ Անի համայնքապետարան** »-ի
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Մարալիկ ՀՎՀՀ՝ 0554607/
Համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանից

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին/

Հարգելի պարոն Հարությունյան,

« **ՀՀ Շիրակի մարզ Անի համայնքապետարան** »-ի (այսուհետ՝ Գնորդ) և « ԲԵՍԹ ՖԻՐՄ » ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025թ.-ի **սեպտեմբերի 02-ին կնքված համաձայնագրով ուժի մեջ մտած ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ**-25/14 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները:

Պայմանագրի 1. 1 կետի համաձայն՝ *Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:*

Ստացվում է, որ Կողմերի միջև կնքվել է Ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի հիմքով Վաճառողը պարտավորվել է մատակարարել նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված «Մատակարարման ժամանակացույց»-ի համաձայն՝ Մատակարարումը պետք է կատարվի Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո հետո 30-35 օրացուցային օրվա ընթացում: ընթացում:

Գնորդի կողմից պահանջված ապրանքների նմուշները Ձեր կողմից ցույց է տրվել և համաձայնեցվել մատակարարել 10 օրացուցային օրվա ընթացքում: Գնորդի համապատասխան պատվերների հիման վրա որևէ ապրանք չի մատակարարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը (466 հոդվածի 2-րդ կետ)*»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «*Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բազմիցս խախտվել են ապրանքների մատակարարման ժամկետները*»:

Այսինքն 2025թ. սեպտեմբերի 02-ի պայմանագրի հիման վրա ապրանքների մատակարարումը պետք է կատարվեր առնվազն մինչև 2025թ. հոկտեմբերի 08-ը ներառյալ:

Ինչպես արդեն նշվեց, մինչ օրս գնորդի պահանջի հիման վրա որևէ ապրանք չի մատակարարվել Ձեր կողմից, ավելին Գնորդը փորձել է կապ հաստատել Ձեզ հետ մատակարարման ժամկետների խախտումների պատճառը հասկանալու համար, սակայն ամեն

անգամ Ձեր կողմից նշվել է, որ կմատակարարվի 3-5 օրացուցային օրվա ընթացքում, որն այդպես էլ չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանը հարկադրված է 2025թ.-ի դեկտեմբերի 5-ից Պայմանագիրն միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 375.000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամի և 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, Հ/Հ 900495101090)**,

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն **«ԲԵՍԹ ՖԻՐՄ » ՍՊԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյան

05.12.2025թ.